ԱՄԵՆ ԻՆՉ
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՄԱՐ

Ռաջիկա ամիսներին ըստ փյուռֆի շատ երկրներից դեպի հայրենիք, դեպի Սովետական Հայաստան շարժվել կսկսեն հայրենադարձների 1947 թվի կարավանները:

Տասնյակ հազարավոր վտարանդի, պանդուխտ, հայրենաբաղձ հայեր ևս, որոնք անիրավության, բռնության, մարդկային իրավունքների բիրտ ոտնահարման և աշխարհի հզորների քար անտարբերության հետևանքով հայրենի հարազատ հողից պոկվել, հեռվել են կյանքի հորձանուտ ալիքների մեջ՝ քշվելով աշխարհի բոլոր անկյունները, բախտ կունենան երջանկության լուսաշող ժպիտը դեմքերին, վերստին խարիսխ հետելու հայրենի հարազատ ափերի վրա, վերադառնալու իրենց իրերի մշտական օրրանը, հարատև վերելքի ուղիով ընթացող ծաղկուն հայրենիքը:

Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում տենդագին նախապատրաստություններ են տեսնում հայրենադարձների նոր խմբերի ընդունման ու տեղավորման համար: Հզոր Սովետական Միության աջակցության շնորհիվ Հայաստանի չքնաղ քաղաքներում, ավաններում ու գյուղերում ուժեղ թափով առաջ է ընթանում բնակարանային շինարարությունը: Պետությունը հսկայական միջոցներ է ներդնում բնակարանային ծավալուն շինարարության համար: Տասնյակ հազարավոր կոկիկ բնակարաններ են կառուցվում մեր երջանիկ հայրենադարձների, հեռավոր օտար ափերից հայրենիք դարձող սովետական նոր քաղաքացիների համար: Հայրենի վեհատեսիլ բնության ծոցում մեր բախտավոր հայրենադարձ վերաբնակների համար նոր, բարեշեն ավաններ են կառուցվում, օժտված կուլտուր-կենցաղային սպասարկման բոլոր հարմարություններով: Բնակարանային մեծ շինարարություն են կատարում նաև կոլխոզները, որոնք պատրաստվում են իրենց գիրկն ընդունելու հայրենիք դարձող արյունակից եղբայրներին ու քույրերին: Սովխոզներում, կոլխոզներում, քաղաքներում, ավաններում կառուցվող բազմաթիվ բնակարաններ շրջապատված կլինեն տնամերձ հողամասերով, պարտեզներով:

Սովետական Հայաստանի քաղաքներում ու գյուղերում անհատական բնակարանային մեծ շինարարություն են ծավալել նաև անցյալ տարում հայրենիք ժամանած սովետական մեր նոր քաղաքացիները, որոնց պետական ու հասարակական կազմակերպությունները, կոլխոզները մեծ օժանդակություն են ցույց տալիս:

Բացի բնակարանային շինարարությունից հայրենիքում մեծ աշխատանքներ են տարվում հայրենադարձներին նաև աշխատանքով ապահովելու ուղղությամբ: Նոր ավանների շինարարության զուգընթաց նոր ջրանցքներ են կառուցվում, նոր հողամասեր յուրացվում: Թափով առաջ է տարվում հետպատերազմյան հնգամյակի նորակառույցների շինարարությունը. բազմահազար հայրենադարձներ այդ նորակառույցներում հնարավորություն կունենան իրենց ջանքերը միախառնելու հայրենիքի իրենց եղբայրների ու քույրերի ջանքերին, մասնակցելու սոցիալիստական հայրենիքի շինարարությանը և հայրենի հարազատ հողի վրա իրենց կենսախինդ կյանքը կերտելու: Նորակառույցները, սովխոզներն ու կոլխոզները պատրաստ են իրենց գիրկն ընդունե-

լու երկար տարիներ հայրենիքի կարոտը սրտերում երկրե-երկիր թափառող մեր հարազատներին: Բոլոր հայրենադարձների համար կյանքի ու աշխատանքի պայմաններ կան ստեղծված հայրենիքում: Հայրենադարձության գործը համաժողովրդական բնույթ է ընդունել. Հայրենիքում բնակվող հայ ժողովրդի բոլոր զավակներն անխտիր անում են ամեն հնարավորը՝ իրենց հայրենադարձ եղբայրների ու քույրերի կյանքը հայրենիքում երջանիկ ու կենսախինդ դարձնելու համար:

Սակայն հայրենադարձների նկատմամբ նմանօրինակ պարտականություններ ունեն կատարելու նաև գաղութահայ ժողովրդի զավակները. հայ ժողովրդի սփյուռքով մեկ ցրված բոլոր զավակներն էլ անխտիր պարտավոր են իրենց օժանդակությունը բերել հերգաղրի սրբազան գործին: Հայրենիք վերադառնալու համար արձանագրված բազմաթիվ անձինք նյութական օժանդակության են կարոտում հայրենի հարազատ ափերին հասնելու համար. անհրաժեշտ է այդպիսիներին ապահովել հանապարհածախսով, սենդով, դյուրություններ ստեղծել նրանց համար հայրենիք տեղափոխվելու: Ներգաղթի գործը համաժողովրդական գործ է և պահանջում է հայ ժողովրդի բոլոր զավակների ուժերի լիակատար լարում:

Ուրախ ենք արձանագրելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և գաղութահայ պրոգրեսիվ կազմակերպությունների կատարած մեծ աշխատանքն այդ ուղղությամբ: Ամեն գովասանքից վեր է Հ. Բ. Ը. Մ.-ի նախաձեռնած հանգանակությունը ներգաղթի օժանդակության համար: Մենք կոչ ենք անում գաղութահայ ժողովրդի բոլոր զավակներին իրենց աջակցությունը բերել ներգաղթի հաջող կազմակերպմանը: Մենք հավատացած ենք և լիահույս ենք, որ հայ ժողովրդի դեռ ևս օտար հորիզոններին տակ ապրող զավակները իրենց միջոցները չեն խնայի ու իրենց լուման կմուծեն ներգաղթի ֆոնդը ի հեռուստ ներգաղթի բոլոր տիպի ու գույնի թշնամիների:

Ներգաղթի հաջող կազմակերպումը թշնամիների բանակում մեծ իրարանցում է առաջացրել. հայ ժողովրդի ու ներգաղթի ծախու թշնամիները, օտարների ստոր վարձկանները ամեն կերպ ճգնում, իր սաղմի մեջ ծախողության մատնված փորձեր են անում ձախողելու ներգաղթի կազմակերպման գործը: Հայ ժողովրդի արտասահմանյան պրոգրեսիվ կազմակերպությունները և Հայ Եկեղեցին ու հայ հոգևորականությունը պարտավոր են ամենայն աշխարհությամբ ու զգոնությամբ հետևելու ոչնչություն ներկայացնող թշնամու բոլոր փորձերին, ժամանակին հողազերծ անելու ու կանխելու նրա կողմից ներգաղթի դեմ նյութվող դավերը, իր սաղմի մեջ խեղդելու օտարներին վաճառված դավաճանների հականերգաղթային, հայրենադավ, նողկալի գործունեությունը, անարգանքի սյունին գամելու ազգի ու հայրենիքի թշնամիներին:

Հայ Եկեղեցին, հայ հոգևորականության լայնախոհ ներկայացուցիչները արտասահմանում ընթացել ու ընթանում են ներգաղթի կազմակերպիչների առաջին շարքերում. այսուհետև ևս նրանք պարտավոր են շրջելացող եռանդով շարունակել ազգանվաքման մեծ գործի սատարմանը: Հայ Եկեղեցու ներկայացուցիչները արտասահմանում նույն նպատակը պետք է հետապնդեն, ինչ որ պատկերավոր ձևով արտահայտել է Հունաստանի բեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանը.

«Ինչպես Մովսես իր տառապած ժողովուրդը Կարմիր ծովեն անվտանգ անցուց և Քանանու երկիրը փոխադրեց, ես ալ խորապես կփափաքիմ, առ այդ կաղոթիմ ու կնավատամ, որ բախտը պիտի ունենամ իմ հայ ժողովուրդս իր ամբողջությամբ ողջ ու առողջ ու անվտանգ մեր երկիրն առաջնորդել...»:

Այս պետք է լինի ո՛չ միայն յուրաքանչյուր ազգիվ հայ հոգևորականի, այլ և յուրաքանչյուր շիտակ հայ ազգասերի մրտածմունքը. չկա՛ ավելի վսեմ գործ, քան հայ ժողովրդի աստանդական հատվածներին իր երկիրն առաջնորդելը. իսկ դրա համար հայ ժողովրդի զավակներից պահանջվում է ուժերի առավելագույն լարում՝ անելու այն ամեն հնարավորը, ինչ որ անհրաժեշտ է օտար հորիզոններին տակ դեգերող մեր եղբայրներին ու քույրերին հայրենի երկիրն առաջնորդելու համար: Ներկա պահուն հայրենիքից ու ներգաղթից զատ մեր մտքերը զբաղեցնող ուրիշ խնդիրներ չպետք է լինեն. ամեն ինչ հայրենիքի ու ներգաղթի համար, այս պետք է լինի մեր այսօրվա նշանաբանը:

Սովետական Հայրենիքի ու ներգաղթի թշնամիների ստոր փորձերը վիժեցնելու, հայրենադարձության գործը լավագույն կերպով կազմակերպելու և հայ ժողովրդի սփյուռքով մեկ ցրված զավակների բռնադատված իրավունքները պաշտպանելու համար գաղութահայ հատվածներից պա-

հանջվում է միասնականություն: Այդ միասնականության ստեղծման նպատակին էլ պիտի ծառայի ապրիլի 30-ին Նյու-Յորքում գումարվելիք Համաշխարհային Հայկական Կոնգրեսը:

Համահայկական այս կոնգրեսը նպատակ է դրել միություն ու համագործակցություն ստեղծել բոլոր հայ գաղութներում՝ ներգաղթի և վերաշինության շուրջը, նպաստավոր հասարակական կարծիք ստեղծել հայ հողային իրավունքների նկատմամբ ու հետապնդել նրա արդար լուծումը Միացյալ Ազգերի կազմակերպության միջոցով և ուժեղացնել մշակույթային կապերը գաղութների ու Մայր Հայրենիքի միջև:

Համաշխարհային Հայկական Կոնգրես հրավիրելու Ամերիկահայ Ազգային Խորհրդի նախաձեռնությունը վեր է ամեն դրվատանքից. այդպիսի կոնգրեսի կարիքը, հայ ժողովրդի համար կենսական մեծ կարևորություն ներկայացնող հարցերի շուրջը արտասահմանյան բազմաթիվ հայ հասարակական կազմակերպությունների միջև համագործակցություն ստեղծելու նպատակով, վաղուց էր զգացվում: Լիահույս ենք, որ Համաշխարհային Հայկական այս անդրանիկ Կոնգրեսը ի վիճակի կլինի լուծելու իր առաջ դրված խնդիրները: Ի սրտե ողջունում և հաջողություն ենք ցանկանում Համաշխարհային Հայկական Կոնգրեսին: